



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 դեկտեմբերի 2017 թվականի թիվ 216- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՅՈՒՅՄԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2017թ. դեկտեմբերի 27-ի N 1024-Ա որոշումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի հաստիքացուցակում կատարել հետևյալ փոփոխությունները.

1/ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչի /ծածկագիր՝ 70-2.2-16/ պաշտոնը փոխարինել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի վարիչի /ծածկագիր՝ 70-2.2-25/ պաշտոնով:

2/ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետի /ծածկագիր՝ 70-3.1-7/ պաշտոնը փոխարինել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետի /ծածկագիր՝ 70-3.1-18/ պաշտոնով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱՐՈՎՅԱՆ



29 .դեկտեմբերի 2017թ.
ք. Իջևան